

«ՀԱՅԱՍՏԱՆ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՃԱՄԲՈՒՆ ՎՐԱՅ, 1918»

Հեղինակ՝ ՌԻՉԱՐԾ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

Լոս Անճելըսի մէջ վերջերս լոյս տեսաւ Ռիչարտ Յովհաննէսեանի անգլերէն ուսումնասիրութիւնը՝ «ՀԱՅԱՍՏԱՆ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՃԱՄԲՈՒՆ ՎՐԱՅ, 1918»:

Պրն. Ռ. Յովհաննէսեան երիտասարդ պատմաբան մըն է, որ կը դասաւանդէ Լոս Անճելըսի համալսարանէն ներս: Զինք ճանչցանք, երբ տարիներ առաջ տարուան մը համար այցելեց ծեմարան: Հաղուագիւտ են օտար լեզուներով գիրքեր, որ կը գրադին մեր անկախութեան պայքարով: Պր. Յովհաննէսեանի գիրքը կը գոցէ մեծ բաց մը:

Գիրքը կը բաղկանայ տասներմէկ գլուխներէ: Առաջին չորս գլուխները արագօրէն կը ներկայացնեն հայութեան անցեալը, Ռուսահայաստանը, Թրքահայաստանը, 1914-1917 ջարդի, տեղահանութեան եւ նահանջի շրջանը: Հիմնական մասը գիրքին կը գրադի 1917-1918 տարեշրջանով ու կը նկարագրէ 1917ի ուսական յեղափոխութիւնը, անոր ազդեցութիւնը կովկասէն ներս, Վրաստանի, Ատրպէյճանի եւ Հայաստանի ժողովուրդներուն կեանքի յեղաշրջումը, փնտրատուքները, դաշնակցութիւնները, ներքին պայքարները, Թրքական յառաջխաղացքը, բանակցութիւնները, կովկասեան Սէյմի ստեղծումը, պատկերը, լուծումը եւ Վրաստանի, Ատրպէյճանի ու Հայաստանի անկախութիւնները: Վերջին գլուխը կը ներկայացնէ հայ նոր կառավարութեան բանակցութիւնները Թուրքիոյ հետ, ինչպէս նաև ապադաշի յուսալի հեռանկարը, որ ծագեցաւ Թուրքիոյ պարտութեամբ: Պր. Յովհաննէսեան կը խոստանայ շարունակել եւ իր յաջորդ գիրքով տալ Հայաստանի Հանրապետութեան պատմութիւնը: Կ'իմանանք որ մօտ է նաև այս նոր ուսումնասիրութեան հրատարակումը:

Շատ լուրջ, խնամուած եւ խղճամիտ աշխատանքի արդիւնք է այս գիրքը: Պր. Յովհաննէսեան դտած եւ ուսումնասիրած է հարիւրաւոր աղբիւրներ, գիրքեր, յօդուածներ, յուշեր, հայ, Թուրք, ռուս եւ եւրոպացի հեղինակներէ, շարահիւսած է վրկայութիւնները եւ տուած բաւական լրիւ պատկերը անկախութեան նախօրեակի պատմութեան: Կարելի չէ տարակուսիլ, որ օտար ընթերցողը դնահատանքով պիտի կարդայ այս անաչառ եւ ուղղամիտ նկարագրութիւնը, որ չի խնայեր Թուրքը, հայը, վրացին, ռուսը կամ եւրոպացին:

Հայուն պատմութիւնը կը ներկայացնէ այնպիսի ողբերգական եւ հերոսական պատկեր, որ կը յուսանք, թէ ամերիկացի ընթերցողը, որուն համար հաւանարար գրուած է այս գիրքը, պիտի շկարենայ մնալ անկողմնակալ, ինչպէս ինքզինքին պարտագրած է ըլլալ հեղինակը, այլ պիտի որդեգրէ հայուն հայեցակէտը ու պիտի պահանջէ անոր դատին արդար լուծումը: Սակայն, կրնայ պատահիլ նաեւ, որ հեղինակին անկողմնակալ կեցուածքը փոխանցուի նաև ընթերցողին, որ ծանօթ չէ հայու հողիին, մշակոյթին եւ երազին: Բնականաբար ան պիտի տարուի զէպքերով միայն ու պիտի չապրի հայուն տոտապանքն ու երջանկութիւնը, ինչ որ ընթերցողը կը վերածէ պատմական չոր հայեցակէտով չէղօք հանդիսատեսի, բան մը, որ ոչինչով կը հաստատէ հայու երազին: Հաւանարար հեղինակը իր պատմաբանի անաչառութեան առաջադրանքին դիմաց, չէ անդրադարձած այս վտանգին, կամ թերեւս յարմար չէ նկատած անդրադառնալ, եւ տեղ չէ տուած այն կարգ մը հիմնական տուեալներուն, որոնք պատմական զէպքերը կ'ապրեցնեն իբրև անբաժան մասը ժողովուրդի մը հողեկան ու մըտաւորական աշխարհին: Պր. Յովհաննէսեան տուած է զէպքերը, նկարագրած է պարագաները,

հաւասար չափով յիշած է Թուրքին, ռուսին, հայուն եւ վրացիին հայեցակէտը, սակայն չէ տուած հայու հողին եւ միտքը: Ցաւալի է այս, քանի օտար ընթերցողին համար սքանչելի առիթ է այս ապրելու հայու տառապանքը, զրկանքը եւ յաղթանակը: Այս հողեկան հաղորդակցութիւնը կարելի կ'ըլլար, եթէ փոխանակ 7 էջով հակիրճ կերպով տալու 1915ի ջարդը, հեղինակը ճիշդ ընէր փոխանցելու անհաղնութիւնը ցեղասպանութեան եւ հերոսութիւնը վանի, Ուրֆայի, Շապին-Գարահիսարի հերոսամարտերուն, եթէ տրուէր ուժգնութիւնը Մայիս 28ի հրաշքին, փոխանակ մէկական տողով յիշելու Սարտարապատ, Բաշ-Ապարան, Ղարաբաղի սէ, եթէ գծուէր դիմադրիւմը Արամ Մանուկեանի, Արամատացի Մուրատի, Գրոյի, Ռուբէն Տէր Մինասեանի, փոխանակ հարեւանցի եւ շատ հակիրճ կերպով անդրադառնալու անոնց գործունէութեան:

Այս բոլորը անշուշտ կը բըխին Հայ Դատի հետապնդման տեսանկիւնէն, բան մը, որ վեր է զէպքերէն եւ որ անաչառութեան իսկ սիրոյն պէտք է դերադասել ակադեմական չորութեան: Անուրանալի է սակայն պր. Յովհաննէսեանի գիրքին կուտ կառոյցը եւ լրջութիւնը: Յանձնարարելի է որ այս գիրքը թարգմանուի ուրիշ լեզուներու եւ մանաւանդ հայերէնի:

ՎԱՐԱՆԻ ՓԱՓԱԶԵԱՆ

ԵՐՐՈՐԴ Ի ՅԺ ՄԸ ԶԻՆԱՍՏԱ

Զինաստանի մէջ կազմուիլ սկսած է նոր Երրորդ Ոյժ մը, որ մասնաւորաբար կը բաղկանայ մտաւորականներէ: Այս նոր շարժման գլխաւոր նշանաբանն է «մտածումի եւ քաղաքական գործունէութեան ազատութիւն»:

Շարժումը մեծ արձագանգ դտած է Կեդրոնական Զինաստանի մէջ:

Առաջին ապացոյցն է Զինաստանի մէջ կազմակերպուած նոր դիմադրութեան մը: Ամէն պարագայի մէջ սակայն, այս շարժումը որոշ ձև ստացած է եւ շատեր՝ Երրորդ Ոյժ անունը կու տան անոր:

Շարժման գլխաւոր դեկավարները կուսակցական պրոպականտիստներ չեն, այլ մարդիկ՝ որ իտէալ մը ունին, որ կը խորհին, թէ «Մշակութային Յեղափոխութիւն»ը ձախողեցաւ: Անոնք կ'ընդունին, թէ Մաօ Յէ Թուն պէտք է քաշուի եւ իր տեղը տայ «Իրերու նոր վիճակի մը, որ «ընկերային արդարութիւն պիտի ապահովէ» եւ վերջ պիտի տայ դաւանարանական ճնշումին»:

Այս զարգացման մէջ շահեկանը ա'յն է, որ Զինաստանի վեց շրջանները հակակշռող կուսակցական հին դեկավարներ ու բանակի ներկայացուցիչներ՝ իրենց աջակցութիւնը ընծայած են քաղաքական այս նոր շարժման, որ գլխաւորաբար կը բաղկանայ համալսարաններու ուսանողներէ, փրոֆեսէօրներէ, ուսուցիչներէ, արուեստագէտներէ եւ զըրագէտներէ:

Զօրավարներ ու կուսակցութեան եւ պետական մեքենայի անդամներ, որ գիրքեր ունին յեղափոխական նոր յանձնախումբերուն մէջ, որոնք թէև տեսականօրէն վարչաձեւին աջակից կը ներկայանան, սակայն յիրականութեան մէջ հակամտոյական են, իրենց ազդեցութիւնը կը բանեցընեն՝ երկրի ներքին տաղնապին ելք մը տալու համար: Զօրավիգ կը կանգնին քաղաքական նոր շարժումին, այն յոյսով, թէ պիտի կրնան տնտեսական կայունութիւնը ապահովել:

Կը խորհին, որ թէ պետութեան եւ թէ կուսակցութեան մեքենան պէտք է աւելի առաձ-